## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 2018թ-ի մարտի 29-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-8/2-1 ծածկագրով պայմանագրում 2018թ-ի ապրիլի 27-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն՝ ըստ սույն Համաձայնագրին կից N 1 և N 2 հավելվածների:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով 29.03.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-8/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.7 կետերը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի առաջատար մասնագետ Գ. Վարդանյանին:

**Հեռախոս՝ 010-29-44-18:**

**Էլ. փոստ՝ g.vardanyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-8/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 27.04.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր Ա/Ձ Արամ Զարգարյանի հետ), ի դեմս ընկերության տնօրեն Ե. Եղիազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 29.03.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-8/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.7 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն՝ ըստ սույն Համաձայնագրին կից N 1 և N 2 հավելվածների:

2. **Այլ պայմաններ**

2.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | **«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ** |
| **ք. Երևան Բագրևանդի 5** | **ք. Երևան, Արին Բերդի 3/4** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **"Ամերիաբանկ" ՓԲԸ** |
| **Հ/Հ 900011144079** | **Հ/Հ 1570005353830100** |
| **ՀՎՀՀ 02522157** | **ՀՎՀՀ 02231092** |
| **ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ** | **Տնօրեն** |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ե. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ |
| | AH0149253 |

*Հավելված N 1*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | ԳՄԱ CPV կոդը | Գնման առարկան | Չափման միավոր | Միավորի գինը | Քանակը | Մատակարարման ենթակա քանակներ, ըստ 2018թ. 2-րդ եռամսյակի ամիսների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս |
| 1 | 18511180/15 | մեդալներ, կրծքանշաններ /Ուսումնական զորամասերի ավարտական կրծքանշաններ/ | հատ | 1793.84 | 3315 | 3315 | | |
| 2 | 18511180/16 | մեդալներ, կրծքանշաններ /Զինծառայողների դասային որակավորման կարգի կրծքանշաններ/ | հատ | 1793.9 | 4334 | | 4334 | |
| 3 | 18511180/17 | մեդալներ, կրծքանշաններ /Պարտադիր ժամկետային զինծառայողների դասային որակավորման կարգի կրծքանշաններ/ | հատ | 1793.89 | 3047 | | 3047 | |

*Հավելված N 2*

## Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ |
| 1 | մեդալներ, կրծքանշաններ /Ուսումնական զորամասերի ավարտական կրծքանշաններ/ | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 | 5 946 579.6 |
| 2 | մեդալներ, կրծքանշաններ /Զինծառայողների դասային որակավորման կարգի կրծքանշաններ/ | | 7 774 762.6 | 7 774 762.6 | 7 774 762.6 | 7 774 762.6 | 7 774 762.6 | 7 774 762.6 | 7 774 762.6 | 7 774 762.6 |
| 3 | մեդալներ, կրծքանշաններ /Պարտադիր ժամկետային զինծառայողների դասային որակավորման կարգի կրծքանշաններ/ | | 5 465 982.8 | 5 465 982.8 | 5 465 982.8 | 5 465 982.8 | 5 465 982.8 | 5 465 982.8 | 5 465 982.8 | 5 465 982.8 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ<br>տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ե. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ |